



Գերմանիայի
Դաշնային Հանրապետության
դեսպանություն
Երևան

Այցագիր՝ Գերմանիայում ամուսնությունը գրանցելու և այնտեղ բնակվելու նպատակով

(միայն Գերմանիայի համար)

Վիզայի համար դիմում ներկայացնելը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է նախապես պայմանավորվածություն ձեռք բերել: Պայմանավորվածություն կարող եք ձեռք բերել միայն առցանց (օնլայն):

Օնլայն-հերթագրման համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքէջի միջոցով.

www.eriwan.diplo.de

Փաստաթղթերն ընդունելուց հետո գործերի քննության և մշակման համար պահանջվում է առնվազն **6-12 շաբաթ** (կախված է Գերմանիայում գործի քննման ժամկետից): Առանձին դեպքերում կարող է տևել ավելի երկար:

Հայաստանի քաղաքացիների համար այցագրի վճարը կազմում է 75 եվրո: Այն պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս՝ **համարժեք ՀՀ դրամով**:

Դիմումի փաստաթղթերը

Դիմում հանձնելիս անհրաժեշտ է **անձամբ** ներկայացնել ստորև նշված փաստաթղթերը:

Սկզբունքորեն բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել **բնօրինակով**, յուրաքանչյուրից նաև՝ **երկուսկան պատճեն**: Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ փաստաթղթերը պատուհանի մոտ պետք է հանձնել **երկու նույնական փաթեթով** (յուրաքանչյուր փաթեթը սկսվում է դիմում-հարցաթերթիկով և պարունակում ստորև թվարկված փաստաթղթերի պատճենները)՝ դասավորելով նշված հերթականությամբ: Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) անհրաժեշտ է ներկայացնել **A4 ֆորմատի** թղթի վրա:

Խնդրում ենք թղթերը **չկարել, չամրացնել**: Դեսպանությունը հասցեագրված ֆաքսերը կամ գրությունները չեն տեսակավորվում և չեն կցվում գործերին: Ոչ լիարժեք դիմումներ չեն ընդունվում:

Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Լիարժեք դիմում ներկայացնելը դեռևս բավարար հիմք չէ վիզա ստանալու համար:

Դեսպանությունը նշում է, որ համաձայն Կացության մասին օրենքի §82-ի դիմում ներկայացնողը պարտավոր է ապահովել դիմումի լիարժեքությունը, որևէ փաստաթղթի բացակայության դեպքում դեսպանությունը համարում է, որ այն չի կարող ներկայացվել:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- գերմաներենով կամ անգլերենով, **բոլոր հարցերին հստակ պատասխաններով լրացրած** երկու դիմում-հարցաթերթիկ: Այն կարող եք գտնել մեր ինտերնետային էջում՝ <https://videx-national.diplo.de>
- 3 նոր, բիոմետրիկ լուսանկար, երկուսը խնդրում ենք սուսնձել դիմում-հարցաթերթիկներին

- գործող ճամփորդական անձնագիր՝ ՀՀ էլքի կնիքով, որը պետք է վավերական լինի ամենաքիչը վեց ամիս: (Անձնագրում պետք է լինի առնվազն երկու դատարկ էջ, իսկ վավերականության ժամկետը չպետք է գերազանցի 10 տարին)
- անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ առկա է կնիք, այցագիր կամ որևէ այլ նշում (2 օրինակ)
- ստորագրված հայտարարություն կեղծ տվյալների վերաբերյալ (տե՛ս դիմում-հարցաթերթիկը)
- ապագա ամուսնու/կնոջ ճամփորդական անձնագրից երկու պատճեն, առկայության դեպքում նաև Հայաստանի մուտքի-էլքի կնիքներով/վիզաներով էջերի պատճենները (2 օրինակ), եթե նա Գերմանիայի կամ Եվրամիության երկրների քաղաքացի չէ, գերմանական կացության թույլտվության պատճենը (2 օրինակ)
- ապագա ամուսնու/կնոջ գրանցման վերաբերյալ տեղեկանք (2 օրինակ)
- գերմանական ՔԿԱԳ մարմնի կողմից ամուսնության գրանցման համար դիմելու վերաբերյալ գրավոր հաստատում՝ ամուսնության օրվա նախնական տվյալներով (2 օրինակ)
- ծննդյան վկայականի բնօրինակը՝ հաստատված ապոստիլով, վկայականի նոտարական վավերացմամբ թարգմանությունը և ապոստիլը – երկու օրինակից: Եթե բնօրինակը գտնվում է Գերմանիայի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում, ապա երկու օրինակը բավական է:
- գերմաներենի՝ եվրոպական չափանիշներին համապատասխան Ա1 մակարդակի իմացության մասին ապացույց՝ Գյոթե-ինստիտուտի „Start Deutsch 1“ սերտիֆիկատ կամ “Österreichisches Sprachdiplom“ կամ Test DaF-ի կամ telc Start Deutsch1-ի վկայականներ: (բնօրինակը և երկու պատճեն):

Լեզվական գիտելիքների ապացույցի մասին տեղեկությունները տես՝
<https://erivan.diplo.de/blob/1238100/cd61f4f7ec38b83b35b8ef96166d5af7/merkblatt-deutschkenntnisse-data.pdf>

ՄԵՎՆՈՂ ԵՐԵՆԱՆԵՐ (յուրաքանչյուրի համար ներկայացվում է առանձին դիմում)

- դիմում-հարցաթերթիկները, լուսանկարները, անձնագիրը, պատճենները, ինչպես նշված է վերևում
- ծննդյան վկայականի բնօրինակը՝ հաստատված ապոստիլով, ինչպես նաև ծննդյան վկայականի և ապոստիլի նոտարական թարգմանությունը և թարգմանությունից երկու պատճեն
- անհրաժեշտության դեպքում՝ հայրության ճանաչման վկայականը՝ հաստատված ապոստիլով, ինչպես նաև հայրության ճանաչման վկայականի և ապոստիլի նոտարական թարգմանությունը և թարգմանությունից երկու պատճեն
- ապացույց միակողմանի խնամակալության իրավունքի վերաբերյալ (հայկական իրավասու դատարանի վճռի, մահվան վկայականի կամ չմեկնող ծնողի համաձայնության բնօրինակը՝ հաստատված ապոստիլով)՝ նոտարի կողմից վավերացրած թարգմանությամբ և դրանից երկու պատճեն: Գերմանիայում բնակվող ծնողի մոտ տեղափոխվելու դեպքում տվյալ ծնողի նոտարական վավերացմամբ համաձայնությունը (բնօրինակի առկայությունը պարտադիր չէ) և երկու պատճեն:

Կարևոր ցուցումներ

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ **դեսպանության շենքում հյուպատոսական բաժնի պատուհանի մոտ** գանձվող այցագրի վճարից բացի այցագրի համար դիմելիս այլ վճար նախատեսված չէ:

Դեսպանությունը **չի համագործակցում** որևէ տուրիստական ընկերության հետ: Դա վերաբերում է նաև դեսպանության անմիջական հարևանությամբ գտնվող ծառայություններ մատուցող գրասենյակներին: Ճամփորդական կամ այլ ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումներն այն մասին, որ իրենք համագործակցում են դեսպանության հետ, **չի համապատասխանում իրականությանը:**

Ոչ ոք չի կարող ազդել Ձեր դիմումի հաջողության հեռանկարի վրա, քանի որ դիմումների վերաբերյալ որոշում է կայացնում բացառապես գերմանացիներից բաղկացած անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, ապա Ձեզ փորձում են խաբել: Ոչ մի դեպքում փող մի' վճարեք:**

Այցագրի հետ կապված հարցերի մասին արժանահավատ տեղեկություններ Դուք կարող եք անվճար ստանալ դեսպանության **հյուպատոսական բաժնի աշխատակիցներից:** Այլ անձինք տեղեկություններ տրամադրելու իրավասություն չունեն: